# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՐԹԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Հարթագյուղ համայնք, Հեռ. 094-17-27-72, hartagyugh.lori@mta.gov.am

N-0/100

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

*30 նոյեմբերի 2017թ.*

Հարգելի պարոն մարզպետ

Կից Ձեզ ենք ներկայացնում Հարթագյուղ համայնքի ավագանու թիվ 21 և համայնքի ղեկավարի թիվ 20 որոշումները:

Առդիր՝ 2 թերթ.

ՀԱՐԹԱԳՅՈՒՂ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՐԹԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

«24» նոյեմբերի 2017 թվականի թիվ N-21

## 06-061-0025-003 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆԱՎԱՐՏ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենի 43-րդ հոդվածով,ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 594 հոդվածով,ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով,հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,ինչպես նաև այն համգամանքը,որ ժիրայր Գուրգենի Հակոբյանը 1988 թվականի երկրաշարժից բնակվում է ժամանակավոր տնակում,ամուսնացած է,ունի ընտանիք և չունի բնակելի տուն և քանի որ նա պարտավորվել է իր սեփական ուժերով ավարտին հասցնել կիսակառույց բնակելի տունը

Հարթագյուղ համայնքի ավագանին որոշում է՝

1.Ժիրայր Գուրգենի Հակոբյանին նվիրել Հարթագյուղ համայնքի 0025-0003 ծածկագրի տակ գտնվող 91.5 քմ անավարտ բնակելի տունը և կառուցման և սպասարկման համար հատկացված 0.125 հա հողամասը:
2.Ժիրայր Գուրգենի Հակոբյանի հետ կնքել նվիրատվության պայմանագիրը:

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Սարգսյան Սողոմոն | [signature] | | |
| Ավետիսյան Գալուստ | [signature] | | |
| Հախույան Վահան | [signature] | | |
| Սարգսյան Մակար | [signature] | | |
| Մկրտչյան Ազատ | [signature] | | |

Համայնքի ղեկավար՝ [signature] / Ա..Հարությունյան /

Կ.Տ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՐԹԱԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Հարթագյուղ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Հարթագյուղ ,

## ՈՐՈՇՈՒՄ 20

27 նոյեմբերի 2017 թվականի N-20

### 06-061-0025-0003 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆԱՎԱՐՏ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով,ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 594 հոդվածով, ՀՀ ՀՕ 60-րդ , 64.1 և 89-րդ հոդվածներով,հաշվի առնելով ավագանու համաձայնությունը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2005թ. Դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումը

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Ժիրայր Գուրգենի Հակոբյանին անհատույց նվիրել Հարթագյուղ համայնքի 0025-0003 ծածկագրի տակ գտնվող 91.5 քմ անավարտ բնակելի տունը և կառուցման և սպասարկման համար հատկացված 0.125 հա հողամասը:
2.Ժիրայր Գուրգենի Հակոբյանի հետ կնքել նվիրատվության պայմանագիր:
3.Հողամասը չի գտնվում ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում,հողամասի սեփականության իրավուքի ճանաչումը չի սահմանափակվում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ:
4.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5.Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ Հարթագյուղ համայնք, 4 փողոց, 5 նրբանցք, 3 կիսկառույց բնակելի տուն:

Համայնքի ղեկավար Ա.Հարությունյան

2017թ. 27 նոյեմբերի